# ԱՌԱԾՆԵՐ, ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԱՍՈՒՅԹՆԵՐ

Նոր Նախիջևանի բանահյուսությամբ առաջին հետաքրքրվողը եղել է Ռափայել Պատկանյանը։ 1875 թ. նա լույս է ընծայել Ք. Պատկանյանի ժողովածուի մեջ 188 առած, ասացվածքներ և զրույցներ։

Ավելի հանգամանորեն այս հարցով զբաղվել է Գևորգ Տիգրանյանը, որը 1892 թ. այդ ասացվածքները հրատարակել է առանձին գրքույկով։ Հիշված երկու ժողովածուներն էլ շատ հեռու են լրիվ լինելուց։

Առաջարկելով մեր ժողովածուն, աշխատել ենք ըստ կարելվույն ամբողջական ներկայացնել հավաքածուն, բայց գիտենք, որ նա ևս չի կարող համարվել լրիվ։ Լեզուն հարուստ է, ժողովրդի իմաստությունը մեծ, հավաքելը դժվար։

## Ա

Աբուխտ, էրեշկիկ գեր,
Դավարին ալ դուր գեր։

Աբուրը՝ արբանք,
Հացը՝ բարծանք։

Ագանշին ճուրի ծան կուկա։

Ագաս-մագաս,
Ադ էր բագաս։

Ագռային դակը շադ պան գա բահած։

Ագռային դակը բահիլ է։

Ագռայի դագը ընգնել։

Ագռային դակը ինգիլ է,
Ջամելիք դառծիլ է։

Ագռայով դուն գըգրե։
(Ամեն վաստակը տուն բերող)։

Ագռայով խածածը խածած չէ,
Լեզվով խածածն է խածածը։

Ագռայով գըձամե,
Լեզվով գուլ չի դալ։
(Վճռական չէ, տատանման մեջ է)։

Ագռաներր հարվիլ ին։
(Նա չի կարող դիմադրել)։

Ագռաուշ մաշդ է։
(Ակռաուշ նշանակում է ատամնազուրկ։ Ակառուշ են անվանում այն մարդուն, որ անընդունակ է հարձակվել ուրիշների վրա և կամ անկարող է դիմադրել իր վրա կատարված հարձակումներին)։

Ագռաները սրիլ է,
Հազիր է գուլ գալու։

Աղլեզ-մագլեզ մարդ։
(Առանց համոզմունքի մարդ)։

Աժան պարին վախ չի ունենա։

Աժան պանը թանգ գըլմնա։

Ալաչա խառղան սադանայեն կեշ է։

Ալե-վալե մարդ։

Ալուրը մաղիլ է,
Մազը բադեն գախիլ է։

Ախսի-փախսի խոսքեր։

Ախշիդ, ախշիգ, գծիդ արա,
Մեծ մի անիլ, բըզդիդ արա։

Ախշիգս, քեղի ասիմ,
Հարսը, տուն հասկցիր։

Ախշիգը միսաֆիր է,
Ժամանագը էգավ վայելե։

Ախշիգ ասած պանդ
Դունիդ չիշագն է։

Ախշիգ առ ձերի աչքով,
Մի առ գենչի աչքով։

Ախչիկը վագգի բոչիգ է,
Ժամանագը էգավ. գըթուչե։

Ահը սրդեն, ամոթը՝ էրեսեն։

Ահը մահեն կեշ է։

Աղա, կլխուդ վրան խաղա։

Աղեդ լոխման պերանն է։
(Լավ գործի է)։

Աղեղ դարին բահերվանե ըելնի դլա։

Աձ խաղա վրան։
(Երբ մեկը չի ներշնչում հավատ, ասում են՝ աձ (այծ) խաղա վրան)։

Աձը դավեն տուս։
(Գործը վերջացել է առանց վաստակի)։

Աձը սաղ քեսեք օչխարը մոշթելու
դըդանե,
Էնգի վերչը իրեն ալ դըմոշթին։

Աձի դաթ գնրած բդուղ է։
(Վատ մարդ է)։

Աձին էչնլը կա նը
Չոբանին սայախին գըքերվի։

Աձուն հավը գըռգըռան գըլա։

Աղնդ օրը առդվանեն բելնի գըլա։

Աղեդ լոխման շունին պերանն է։

Աղեգութին արա՝
Ծուրը ծկե։

Աղհացքը չունեցողին համար է։

Ալվենիքին դադը օցի հավգիթ մի տնիլ։

Աղվեսը նեղի մնացիլ է,
Իրեն բոչին վգա արիլ է։

Աղքադ ըլալը ամոթ չէ,
Աղդոդ ըլալը ամոթ է։

Աղքադը ունի հաց ու պանիր,
Գիշերը քունը չի դանիր։

Աղքադին պերանը՝ հաց,
Կլուխը՝ պարծ։

Աղքադին էրեսը բաղ դերևնա։

Ամանլվայի լաթ է։
(Թույլ կամքի տեր մարդ է)։

Ամառվան փուշ,
Ձմեռվան նուշ։

Ամառվան գաքը ծմեռվան ղաք չէ։

Ամեն առավող գեր,
Ամեն իրիգուն պեր։

Ամեն պան մեգ կեդ գունենա։

Ամեն պանը լման, ադ էր բագաս միայն։

Ամեն զարար մեձ խրադ է,
Ծեմը ու զարարը վերչ ունի, ոչ ալ
խրադը։

Ամեն խոռողի ծանը
Իրեն չոփլուգին վրան պածըռ կըլա։

Ամեն մարդուս իրեն շաբիքը մոդիգ է։

Ամեն պան մեգ վերչ ունի։

Ամեն պանը ջանջ չէ,
Որ բադին գպչի ու մնա։

Ամեն կըլխե մեգ-մեգ թել մազ
առնուսնը, միրուք գըլա։

Ամեն մաշդ իր փոսը գիլինքցունե։

Ամեն մաշդ իրեն բոյին գորա հալավ
գըհաքնի։

Ամեն մաշդ իրեն հավան գըշալե։

Ամեն մաշդ իրեն բոյով հալավ գգարե։
Ամեն մաշդ իր փընութքըն ունի։

Ամեն մարգ իրեն գումը,
Հավն ալ իրեն բումը։

Ամեն մարդ քուն,
Գենչ հարսը զարթուն։

Ամեն մեռել իրեն փոսը գիլինքցունե։

Ամեն խուշ իրեն գդուցքով գեր գուդե։

Ամեն գլորը խնձոր չէ։

Ամեն օչխարը իրեն բաչախեն գըգախին։

Ամեն քար իր դեղը ձանդռ է։

Ամենը մամայիս խաթռը գըհարցունում,
Մեկ մը չկա, որ թաբայիս հարցընե։

Ամենքս ալ թիդ մեռնինք,
Ջանջի բես բադին գքած մնալու չինք։

Ամենքիս փայն ալ ժեք գազ ֆող է։

Ամբ օրը՝ խևին առավողն է։

Այ, աշխա՜րք, աշխա՜րք,
Մեշիդ մաշդիկը խավշախ։

Այախ-չանախի ջուր է։
(Կեղտոտ մարդ է)։

Ան բուղին վրան կրե։
(Հույսդ կտրե)։

Այուին օյինը միշտ ահլաթի ձառինւ
վրան է։

Այուն բալան ուդելու լանը՝
Սիֆթե չամուռը դըխոթե։

Այուն մենք խաղցուցինք,
Շաբաշը դուք ստացաք։

Ան՝ ան մուխն է, որ ամենին օջախեն
բիդ էլլե։

Ան նարա պերանին աբուրը չէ։

Ան թաթավեն փախա, հոս փուռշախի
ինգա։

Ան խիարը ձուռ փըսնիլ է։
(Առանց պատճառի չի հավանում)։

Ան մեգ հատ սեռնիքը
էրգու անքամ վառող է։

Ան նարա ագռային պանը չէ։
(Այդ նրա ուժերից վեր բան է)։

Անամոթ էրեսին սև պան չըկա։

Անաստաս, վըդեխ էշթաս,
Հոն ալ մնաս։

Անեծքը էրգու պերան ունի։

Անեծքը էրգու պերանով թուր է։

Անղավագ գինմաշդը պարեգամ չէ
էրգանը։

Անզգամը ճեմը կերեզմանին մեշը
գըսքլե։

Անթառամ փսագի արժանի ըլաս։
Անգաշին անուշ ծան էգիլ է։
Անգաշին զուռնայի ծան կուգա։

Անգաշին վրան պառգիլ է։

Անգաշիդ օղ արա։

Անգաճ քոքեն թեք գարմրեցավ։

Անգաշը գանչե։

Անգաշին ճուրի ծան կուկա։

Անջարը գերիլ է փանշարը։

Անջոռնի հայվանը, ինչքան ալ
պանուգ ըլա,
Իրեն արժեքեն բագաս գըձախվի։

Աննամուսին երեսը թուքիլ ին,
Թաթավ կուկա ասիլ է։

Անոր էրեսը անբես աղու է,
Ջանջ նստենը՝ գսադգի։

Անբես վախեցա, որ ագռաներս
օսկոռ տառծան։

Անբոշ հավին բոշ տնող։

Անցած օրվան օր չի հասնի։

Անդենը բառգելու դեղ չունի։
(Շատ վատ մարդ է)։

Անդեր եզերուն կլոխը պռնել։
(Մահացած մարդու գործը նայել)։

Անցուդը մոռցուգ է։

Անունդ էլլածեն աղեդ է
Աչքդ էլլենը։

Անունը գա,
Ինքը չգա։

Անուշ լեզուն օցը ծագեն գըհանե։

Անուշ շերբեթ ճուր է։

Անքան մի պածռնա, որ գախվիս,
Անքան ալ մի ցաձնալ, որ գոխվիս։

Աշտար մադաղը իրեն ոտքով կուկա։

Աշխարհով էղած պանը վախ չունի։

Աշխադո՞ղը գուդե։

Աշխարհը փենջերե է,
Էգողը գընայե ու գեշթա։

Աշխարհես գըշտում չըկա։

Աշխարհս խոշտ,
Մարդըս՝ սուդ։

Աշխարհս խալդին,
Ես՝ մեչը շերեփ։

Աշխարհս՝ արոդ,
Ես մեչը գարոդ։

Աշխարքը միրղեեն է,
Մեզը դեյլե, մեղալը գիճնե։

Աշխարքս մեզ մաղ մեռղ է,
Խոլայը կիգցող-ուգողին։

Աշխարքս մեզ մաղ մեռղ է,
Բաշարողը գուտե։

Աչք գա,
Լուս չկա։

Աչք գա մեյդան,
Աչք գա ղընդան,
Աչք ալ գա սոխախին օշթան։

Աչք չե, րագի ձագ է։

Աչքդ պաց, չենե կըպանան։

Աչքե դուս,
Սրդե դուս։

Աչքե դես, պերնե դարող։

Աչքը մութ գոխիլ է։

Աչքիդ վրան ունք ունիս՝ ասող չկա։

Աչքիս լուսին րես գըրահիմ։

Աչքիս ձուռ գերևնա։
(Կասկած է հարուցանում)։

Աչքովդ նայե,
Փեշովդ ձաձգե։

Առանց էրիդ մաշդուն՝
Վայ գինմաշդուն։

Առանց բազչառի մահ չի լալ։

Առանց շունի կեղ չի լալ։

Առաջ ծեռնպաց, վերշը կլուխը պաց։

Առադուն շուղ ղարթողը՝
Ճախու չի հանի օսկի օղը։

Առնելու շիշտ, դալու—ռիշտ։

Առնելը խոլայ է,
Դալը—տիժար։

Առաշի գանանչ արոգը
Տառմային մեշը գփսնի։

Առշևը անցած պան է։

Առգուն գանուխ էլլողին, կորձին գեսը
գաղարված է։

Աս Աշխարհը ամագ
Մարդն ալ մեչը տանագ։

Աս ալ էղավ մեզ խալեմ,
Մեզ մը չըհասկըցավ մեր հալեն։

Աս գունը փոս,
Ալայ խևը հոս։

Աս նարա աչռային հարջ պան է։
(Նրա ուժերը թույլ կտան կատարել
այդ գործը)։

Աս նարա ագռաները համրիլ է։

Աս դաքին պուք չի տիմանալ։
(Այս խոշոր ծախսերին վաստակ
չի գիմանա)։

Ասա՝ ախշիգ,
Տուն խըմաշիք։

Ասա՝ մանչ,
Գաբադ գանանչ։

Ասա քիչ՝ պայց շիշտ,
Սուդը վնաս է միշտ։

Ասած է՝ առուդուր,
Եվ ոչ թե առ ու գուլ դուր։

Ասել գա,
Հոքալ չկա։

Ասեղի ձագեն չուվան գանցունե։

Ասիմնը՝ կեշ գըլամ,
Ջասիմնը՝ էշ գըլամ։

Ասլան-խափլանը ուժով է,
Ամա մարդը նարան գըհաղթե։

Աստծու չառնելու հոքին,
Քարին դագն ալ տնիսնը՝ գըմնա։

Ասօր գանք,
Վաղը չըկանք։

Ասօր թանգ, վաղը՝ աժան։

Ասօրվա պանը վաղվան մի ծկիլ։

Ասօրվան հավգիթը վաղվան հավեն
թանգ է։

Ավելի պարին փոր չի ձագիլ։

Ավելը տուռին դակը գըտողա։

Ավելի աբրանքը փոր չի ձագիլ։

Ավճի շունը ավ կնալէն առաւ
Միշտ ուրախ գլա։

Ավուշ ավուշի լըգբած,
Շամառի ծան չի ելնիլ։

Ավուշին մեջը մազ չի փսնիլ։

Ավուշով կըսխմե,
Գաթածը գըլգե։

Արաբային էդևեն էգած շունը
Ջանային էդևեն ալ գեշթա։

Արաբան գողռինը
Ջամփա ցուցնող շադ գըլա։

Արդար եղը ճուրին դադը չի մնալ։

Արի մեղքով,
Մի կա բարտքով։

Արիշ ալուրե խաշթած խուռաբիայի բես
դըգողռթվե։

Արդսունքը մաշդուս հոքիին արունն է։

Արունը արունով չի լվացվի,
Ճեմը ճուրով գըլվացվի։

Արունգզագ մարդ է։

Արևը բորդին հասիլ է։

Արևին չուվանը գդռեցավ։

Ափ մը շուր,
Ափ մը լուս։

Աքահ մարդու աչքը մեգ ավուշ
ֆողը գըկըշտացնե։

### Բ

Բաղը-գաքը չիմացած,
Ինքդ ճուրը մի մդնիլ։

Բազմաս գըպառնա։

Բասըս դերած չիմ, որ մեղա ասիմ։

Բազարը ինձիմեն խոռովիլ է։

Բադ է, բադ։
(Ոչինչ չի լսում, ոչինչ չի հասկանում)։

Բադ է։
(Հենարան է, կռնակ է)։

Բաղը անդաշ ունի։

Բադիվ դուգաս,
Բադիվ գստանաս։

Բադիվ չէ, բադիժ է։

Բուգեն էգիլ է։

Բադռած դառւլ է։

Բաղնիք էշթանը խուռնային գըհավնի,
Հարսնիք էշթանը՝ զուռնային։

Բանը բուրթ է,
Ջանը գըդռած է։

Բարտքը ղալեն,
Մեղքը լալեն։

Բուգի եսիր է։

Բարութը Գրագին քովը չի գենա։
Բերեքեթը միապանության մեջն է։
Բըյըխին պերածը
Միրուքը չի պերի։

Բղգիգ մարդր մեձ էրազ դեսնենը,
գըղարհուրի։

Բիգ լանը, վաշտարեդ թո ըլա։
(Եթե մի բան պիտի կատարես,
կատարե լիովին)։

Բոյը գարշ, խելքը էրգան,

Բոշ ալելույային՝ «ամեն» չի ասին։

Բոշը կլոխեն անցիլ է։

Բոչ խազցունող թիլքի։
(Խորամանկ աղվես)։

Բոչ խաղցունել։

Բուլղուրը պրինձ չէ։

### Գ

Գադուին խաղը մուգին մահն է։

Գադուին բոշը գոխիսնը, ծսնը գելնե։
Գագուն ալ գիշերով սամուռ գերևնա։

Գադուն իրեն փորին համար մուդ
զըպռնե։

Գադուն չիգարին հասած չէ,
Ասիլ է՝ բաբայիս հոքուն։

Գաղուին լիթը մըսի Ֆոդ առիլ է։

Դաթ-գաթ ջուրը քար գըծագե։

Գախիսնը, մեգ գաթ արուն չի էլլի։

Գալ մաղ է։
(Գաղտնիք պահել չգիտցող մարդ)։

Գամաց քալիս—քաղցած է, դասին,
Շուգ քալիս—գադղած է, գասին։

Գայծեն յաղն կըլա։

Գանչելով պան ղառնարնը,
էշը չոխտան ղուն գըխոշդեր։

Գաշիին մեչը չի մեգնիլ։
(Ունի երկու իմաստ—
1· շատ գիրացել է,
2. շատ ջղայնացել է)։

Գաշիեդ ել, խոսքեդ մի մնալ։

Գաստանան դշերեն էլլենը
Գըշերին չի հավնիլ։

Գարմիր հավգիթը ղադգին գվայլե։
Գարմիր օսկին սև օրին։

Գեմին խայայի ղարգիլ է։
(Նրա նավը ժայռի վրա է ելել, խորտակվել, այսինքն՝ նրա ապրանքները ջուրն են ընկել)։

Գենչութըդ վաստըգած ստագդ
ձերութըդ ձալած օսկի է։

Գես պերան սասծ։
(Անորոշ կերպով ասած)։

Գեսը նեսի,
Գեսը—տուսի։

Գեր մալեղ ու խալիծ,
Անունդ րահե թեմիղ։

Գերածը չի էրևա, հաքած գերևա։

Գերած հացը հելալ ըլա։
(Լավ աշխատողին են ասում)։

Գըթ-գըթ կեփե հերիսան,
Ի՞նչ բիդ ասե դուն-փեսան։

Գըձամիս, գըձամիս,
Գուլ չիս գալ։

Գըռդին հեդ մի ըյնիր,
Ջենե ինքդ ալ գըռգ գըլաս։

Գըռդին հեդ րեդք չէ գըռգ ըլալ։

Գըդռած հացը չի սաղնա։

Գինմաշդ գա, դուն գըշինե,
Գինմաշդ գա՝ դուն դըզըշե։

Գյանք չէ, հարա Բաղդադ է։

Գնգանը խումաշ հալավը
Գըմարե էրգանը օջախը։

Գողընդեքի էղած օցի բես
Ջափալամիշ գըլա։

Գոխած դեղը գըշորնա։
(Վատ մարդ)։

Գոխած դեղին չի հավադալ։
(Սիրալիր վերաբերմունք)։

Գոշիկ դարողին գոշիկը ձագ գըլա։

Գոշիգիդ խոնչելեն վեր ճուր մի մդնիլ։

Գոշերը գոգրելեն վերշը,
Ջամփա ցուցնող շագ գըլա։

Գովը գաթ չի դալ՝
Աղբարը ձուռ է։

Գովին գովգիթ գըվայլի, չեքի էգեռ,
Ախչիգներուն ալ փեսա, չեքի քավալեռ։

Գովկիթին մեձ ըլալեն
Գովին գաթը չավելնալ։

Գովը մեձցավ, գաթը բագսեցավ։

Գդրուգ շունի ընգած չիս,
Ինքդ քեզի կալ կիդիս։

Գդրուգ քացախը փարչին զարար է։

Գդրուգ քացախը իրեն փարչը ինքը
գգոդռե։

Գոդոշ մաշդ է։
(Անխելք մարդ է)։

Գոդրած պանը չի սաղնալ։

Գոնագը շըդգըվեցավ։
(Նրա գործերը լավացան)։

Գրագեն էլլա,
Մուխը մգա։

Գրագը ինգաձ դեղը դերե։

Գրագը ծկիսնը, մուխ չի էլլի։

Գրագին վրան եղ զուլե։

Գրագոտ շարիք է։
(Կարող է շատ մեծ վնաս հասցնել)։

Գուժ շինող շաղ,
Գոթ տնող քիչ։

Գուծու մանա գերած գագուփ բես։
(Շատ կատաղած)։

Գույսին լույսը բայձառ է։

Գուշտ դունի քաղցած գադու։
(Սակաւք, անկշտում)։

Գուշտ աչքը փախիլ չի լալ։

Գուշտ մաշդուն հարգելը՝ տիժար է։

Գուդա հազարը,
Գանե բազարը։

Գուդը գուդին կդավ,
Անգուդը՝ անգուդին։

Գուտը գուդին էգավ։

Գուր հավին պունդալը վարը դըլա։

Գուրը ջբռոդին շամփա ցուցուցիլ է։

Գուրը ջբռոդին,
Ջրռոդը դուրին։

Դ

Դալը գանե խաղաղութին։

Դահա ուդելու հաց ունի։

Դամահի մաշդ է։

Դառաթը մեծ, հոքի, հավադ չկա։

Դառոսը ծեզի։
(Դուք էլ իմ դրության մեջ եղեք)։

Դասը չափե,
Մեմը գդռե։

Դասն անքամ չափե,
Մեմը գըդռե։

Դարին մեմը ղադիդ,
Ան ալ նավակատիկ։

Դարին մեգ օրվան բես պան է։

Դաուլ-զուռնային ծանը
Հեռուեն անուշ կուկա։

Դաքը-բաղը չիմացած,
Ուրիշի հեդ մի գցվիլ։

Դաք հացը փոխ է։

Դաք գաթով պերանը էրիլ է,
Շինդխ մածունն ալ փչելեն գուդե։

Դելվիթը էգած ժամանագը բիդ պռնիս։

Դեղ չհասած թվարմիշ մի լաք։
(Գործերդ չըվերջացրած մի դադարիք աշխատել)։

Դեղը խոսիս՝ ջարդար իս,
Դեղը լռիս՝ հանչար իս։

Դեսքը ախշգանը
Ուժը՝ գդրիջին։

Դեր ադենը՝
1. իրեն ուժեղ, առողջ ժամանակը։
2. հարուստ ժամանակը։

Դերդ դվողը դարման ալ գուդա։

Դիզ դարան մաշգու հեդ
Հեչ կորձ մի պռնիլ։

Դիզգինը արուլ դվիլ է։

Դիզդինը ծեռքեն առիլ ին։

Դղան մահանա,
Մարը գըշտանա։

Դղամաշդուս էրեսին վրան
մազ փըսնեցավ՝
Նարամեն վախեցիք։

Դղան չըլացած՝ մարը ձիձ չի դալ։

Դղին անունը կիդնասնը,
Գանչելը խոլայ է։

Դղին պանի տիր,
Ինքդ ալ հեգը կնա։

Դղին ինչպես պռնիս,
Անբես գը մեծնա։

Դղին ջերը եմիշ չի մնա։

Դղին գերաձը հելալ,
Հաքաձը—հարամ։

Դուն խոշտող բալթան տուս գըմնա։

Դունի հեսաբը բազարի ույմիշ չի լալ։

Դունի մեձ էղաձեդ աղեգ է,
Էգեր տուսի շունը ըլամնը։

Դունին մեջի փոքրը եղաձեղ
Աղեղ է, տուրսը շուներում մեձը ըլալը։

Դունը—ասլան,
Տուսը—դադու։

Դունին տուռը բաց,
Սեղանը օրհնած.
Ինքը ղամահի,
Գնիդը Մաքրուհի։

Դուն չէ, խունի է։
(Ծախսը անվերջ է)։

Դունը մնացած ախչիդը
Ծնողներում վիզը պեռ է։

Դունը մերը,
Խոսքը՝ մերը։

Դուն մի կնի
Տրացին կնե։

Դունի դոշադեն ադեղ դոշագ չկա։

Դուն փեսա՝
Շուն փեսա։

Դուշմանիդ հեդ առուդուր արա,
Ամա քեֆ մի անի։

Դուդուբելա պան է։
(Անխելք է)։

Դուր ինձի փող,
Սիրդտ թո չելլե տող։

Դևեն իրեն դուղը չի դեսնիլ։

Դևեները աբուլ դվիլ է,
Լուերի էդևեն դըվաղե։

Դևեն ճուրե դըգշտանա՞,
Տկալով խմելով։

Դևեն ալ մեձ է, ամա դըլոքեցնուն,
Գոնադը պեռ դտնին։

Դևեներ գուլ դվիլ է։

Դևեն չրգերած արոդը ուդենը
Գլոխը ցավ գելլե։

Դևեով առդուր անողը
Արաբախափսան լան բիդ պանա։

Ե

Եղե սենին, վրան կինին,
Բախտ դըպերե ամեն մեգին։

Եգե աման, դան բահաբան։

Եզը եզին հեդ
Ծին ծիին հեդ
Գըքերվին։

Եդին դագը բալա գըփնդռե։

Եղը, միսը կնացիլ է։
Ջեմը թիսը մնացել է։

Եղի բես էրես գելնե։

Եղի-մեռղի մեջ է։

Եզոդ բուդուգի քով նըստիս,
Ինքդ ալ գը եղոդիս։
Մուրոդ բուդուգի քով նստիս,
Ինքդ ալ գը մրոդիս։

Եմիշին աղեդը ջիշուն զուդե։

Ես աղա, դուն աղա,
Մեր ճաղաչքը վո՞վ զաղա։

Ես գըծամիմ, դուն ալ դուլ դուդաս։

Ես նարան կիդեի Բողոս,
Տուրս էգավ Մողոս։

Ես քեզիմեն շադ շաբիք մաշիլ իմ։

Երբ որ ձնողները դալիս են
ղավազներին,
Դվողներն ալ, առնողներն ալ շադ
ուրախ ին։
Երբ որ ղավազները դալիս են
ձնողներուն,
Երգու գողմն ալ շադ դխուր են լինում։

Երբ աստված նորեն վար կա,
Առչինը հային խելք բիդի դա։

Երթաս ուդիս, կաս—փխսիս։

Ջ

Ջանին մեջի ֆողը միշտ գազող գըլա։

Ջավագի գսգիծը գրագե շաբիք է։

Ջարգածը շադ, գըչածը չըկա։

Ջըբըխ արիլ է։

Ջըռ խև է։

Ջիր-զուռնա հաքնված։

Ջոռով ավի դարած շունը՝ ավ չի անի։

## Է

Էգեր սոխը, սխտորը հեսաբ անիսնը,
Փաչան չիս ուդի։

Էգեր շիդագ պան գուզիս իմանալ,
Իմացիր դզեն, խևեն և հարփածեն։

Էգեր րիգ ըլանը,
Վաշտաբեդ թո ըլա։

Էգեր րեդք լանը,
Ասեղի ծագեն ալ գանցնի։

Էգեռի ծին արիշ չի էշթա։

Էլամա փագ—ամուր էրդաթ։

Էլլավ, մգավ՝ ավեդիս։

Էլլելու արունը մարմնի մեչ չի մնալ։

Էնգ աղեկ խրադը խոսքը չէ,
Կործն է։

Էշեն ինչիլ է,
Ձու-չուեն վազ էգած չէ։

Էշը մեծցիլ է,
Ջուլը բզգիգցիլ է։

Էշը սադզիլ է,
Լեշը մնացիլ է։

Էշը հեծիլ է, էշ գը փնդռե։

Էշին վրան նստելը՝ մեգ ամոթ է
Վար իչնելը՝ էրգու ամոթ։

Էշին քովը գաբիսնը՝
Ցա առոս գըլա, յա փառոս։

Էշն ալ գամաց-գամաց
Ստամբոլ կնաց։

Էշն ինչ կիդե նուշի համը։

Էդևի շունը վազուգ գըլա։

Էրած սրդի մխիթարանք։

Էրանի ան պանին, որ ըլալու է։

Էրեդ ասօրվանեն աղեդ էր։

Էրես էրեսի մաշդ է
(Մոտիկ մարդ է)։

Էրես չունի։

Էրես առիլ է։

Էրեսեն գարող մնացի։

Էրեսի վրա մնաց։

Էրեսին վրան ջանջ նստինը, գըսադդի։

Էրեսին շամառ, գռնագին կոնդակ։

Էրեսը թուքիլ ին,
Վաշթի ջուր է, ասիլ է։
(Աննամուս մարդ)։

Էրես էլլիլ է։

Էրեսին կեշթա։

Էրեսի կաշի չե, հաստ պադոշ է։

Էրեսիդ վրան րենկ ունիս ասող չկա։

Էրեսին սառւրա գրած չէ։

Էրեսցու առիլ է, աստառ դուզե։

Էրգանը նայիսնը՝ համալ է,
Գընգանը նայիսնը՝ ջամալ է։

Էրիգը դուն կալ չուզե, թո չըկա,
Միայն ալուրը, եղը դուն թո կա։

Էրիգմաշգը տուս, վաստագը նես։

Էրգաթը չեմը գաք ադենը խայնախ գանին։

Էրգան բոյով մաշդը գուտե եմիշին խասը,
գարջ բոյով մաշդը դհագնե հալավին խասը։

Էրգանը հացը՝ մեյդանը,
Օշդուն հացը՝ զնդանը։

Էրգինքեն փնդռածը
կեդինեն կդիլ է։

Էրգու անքամ մեռնելու չինք,
Մեգ անքամեն ալ խալսելու չինք։

Էրգու անգաչ, մեգ պերան,
Կիդցիր ասածիդ սըրան։

Էրգու աչքեդ մեգին մի հավադա։

Էրգու թավշանի էդևեն վազիսնը
Մեզ հադ ալ չիս պռնի։

Էրգու խըսմեթ մեգ գըլա։

Էրգու խևին մեգ խելոք։

Էրգու գինմաշդ մեգ տունի մեչ չին դեղավորվի։

Էրգու թուրի արալըխն է։

Երգուսը մնդի դեղ,
Մեղը՝ հնչի դեղ։

Երգու էրես, մեղ դիրես։

Երգու ծմերուգ
Մեզ ծեռքով չի վերցվիլ։

Երգու քապիկի հարուստ,
Մեղ քապիկի գարոդ։

Երգուշաբթի է օրիդս,
Դընքլիդ է փորիկս։

Երգու ոտքը մեդ պապուչի մեչ գըխոթե։

Երգու չրփլախ քաղնիքին մեչր դըվայլին։

Երգու չամիչ, մեդ գաղին,
Պաներս մնաց վաղին։

Երգու դունի դադու։

## Ը

Ըլալուն դըլա։

Ընթումիշ էղիլ է, իննադը դանե։

Ընդար, էլլար,
Ընգած դեղդ աղեդ նայե,
Մեմալ էշթասնը քովեն քալե։

Ընգա, էլլա,
Գասին ղյանքը
Ասպես դըլա։

Ըշտահդ թըշոց տիր։

## Թ

Թաթավ օրր հավերուն ճուր դվող շադ
դըլա։

Թաթավը ծովը կուկա։

Թաթխվեցավ, մալախ էղավ։

Թալեն րյնելը խիստ խոլայ է,
Թալի կալր—խիստ տիժար է։

Թան, թան,
Թանապուր։

Թանին, թանին,
Թան, թանան։

Թանդ կնված պարին, ստագը հեղը
գըպերե։

Թացը-չորը չիմացած
Կործ մի պոնիլ մարգու հեղ։

Թացը չըմդած, ծուկ չիս պռնի։

Թացն ալ չորին հետ գերի։

Թեզ-թեղ էշդում անողը,
Շադ խըթ շիդակ պան գասե։

Թեթիկի վրա նստած է։

Թել գաթան ջեմը դերգերը չի ուդիլ.
Մեմեգ ադեն իրիցկինն ալ գուդե։

Թելքովը աքուլ տվիլ է։

Թեմբելութինը հարն է,
Աղքատութինը նարա ոշդին։

Թենը ծուկ շադ։

Թըթու մածուն, չոր հաց,
Առ դըթալը, վրան լաց։

Թըռնախի կուկա։
(Խիստ աշխատում է)։

Թըրշե ու ճուրը խմե,
Համայիլ արա, վիզդ գախե։

Թիլքիին բուղ գերածին բես պան է։
(Սուտ, հնարովի բան)։

Թոռղայեն ուրուր չի ստացվի։

Թոփալ իրիցկին բեդք է խրգել էդևեն։
(Նազով եկող)։

Թոփալ մաշդուն
Սաղ ոտքը ուժով գըլա։

Թութխալի ըես գրիլ է։

Թուլ դամարը կդիլ է։
(Թույլ կողմը գիտե)։

Թուլա, թուլա,
Մեչդ նստողը գուլա։

Թուխ թոլա, բոլ թոլա։

Թուղթին էրդու էրեսն ալ
Բեդք է դարթալ։

Թուղթին մեգ էրեսը գըգարթա։

Թուռշի գդռիլ է։
(Խիստ հոգնել է)։

Թուրթուրի բես դըձըձե։

Թուրթուրը ձառին դուշմանն է։

Թուրթուրի բես գբիլ է,
Սաղ արունը ձըձիլ է։

Թուրքն անիձած,
Խոսքն օրհնած։

Թուքածը չի լզիլ։

Թուքը պերանը չորցիլ է։
(Պապանձվել է)։

Թուքը պերանը չի չորնա։
(Անդադար խոսում է)։

Ժ

Ժամեն ես կուկամ, ողորմի ասավաձ տուն դասիս։

Ժամի չանգադուն —
Աղվենիքի պուն։

Ժամին դախլը բարաբ է։
(Ժամը փող չունի)։

Ժեք պան ամուր պռնե՝
Հին պարեգամ, հին կինի, հին ստագ։

Ժըռ-ժըռ գոշիդ,
Մոդնի գալստիկ,
Ջերը չունի գլոր քապիկ։

Ժլադին բարին էրգուս գեշթա։

Ի

Իմանամ է աժան, չիմանամ թանգ։

Իմ լացաձիս մի նայիք,
Գաթան խոշաեցեք։

Իննադեն անուշ պան ի՞նչ գա։
(Համառ մարդ)։

Ի՞նչ անիմ, ի՞նչ ասիմ,
Նախշվանի ախչիդ իմ։

Ի՞նչ անիմ, որ աշխարքս մեձ է,
Իսկ իմ ոտքս նեղ դեղ է։

Ինչ անուշ է, ինչ թթու,
Համ ալ չունի, հոդ ալ չունի։

Ինչ ասել է բաբա-մամա,
Հաքուր կլխուն բալբան սոփա։

Ինչ գըհանքչիմ,
Ինչ գը հառչիմ։

Ինչ գըցանիս,
Ան գըհնձիս։

Ինչ իլիգը, ինչ ըիլիգը, ինչ ալ իր մանողը։

Ինչ գուզիս, արա,
Միդք արա, անբես արա։

Ինչ սոյերեդ դդռվե,
Ինչ օդարներուն մոգդցիր։

Ինչ սուրփին մոմ խոստացիր,
Ինչ դզին մեգ պան։

Ինչ մոդգցիր, որ էրե։
Ինչ հեռուցիր, որ բազե։

Ինչ չուվաններ գդրած բդուղ է։

Ինչ շիշը գերե, ինչ քեբաբը։

Ինչ գուզիս արա,
Ճեմը անունդ կերեզման մի դանի։

Ինչ գուդե, ինչ ալ գուդեցունե։

Ինքն ալ չի ուդիլ, ուրիշին ալ չի ուդեցնուլ։

Ի՞նչ մեղքը մեղքի վրա տնիմ։

Ինչքան ալ աչքը պածռնա,
Օնքեն վեր չի պածռնա։

Իննադի համար մուգ գըմոշթե։

Ինքը իր մեղքով գըդաբգվի։

Ինքը իրեն շուքեն գվախենա։

Ինքը իր եղով գըդաբագվի։

Ինքը չոչամա,
Պայց խելքը նոմայ։

Իմ դեղես մաշդ չըլա,
Իմ բարձանքս շադ ըլա։

Իր մեղքը իրեն վիզը։

Իրար միս գուդին։

Իրեն խազը հավի չափ դեսած չէ,
Տիրացինին հավը խազեն մեձ դեսիլ է։

Լ

Լան օրդ նեղ արա,
Որ նեղ օրդ լան լա։

Լախանքա պերան։ (Կեղտոտ բերան)։

Լավ է դաղանդ, քան վաշդեվոր։

Լավ է էշ, քան կեշ։

Լավ է հավդիթին դեսը,
Քան սաղ գշերը։

Լացը լաց դպերե։

Լեզուին դակը պան դա։
(Ուզում է բան ասել)։

Լեզուն առանց ոսկոռ է,
Մարդուս մեճքը դըդոդռե։

Լեզուն մեռղ,
Սիրդը՝ լեղի։

Լեզուն ոսկոռ չունի,
Որ սեմթ ուզենաս՝
Ան սեմթը ման զըպերիս։

Լեղին բադռած կնաց։

Լոշ-լոշ անդաշ։ (Կախված ականջ)։

Լու նալող։ (Վարպետ մարդ)։

Լույեն դևե խոշտիլ է։
(Փոքր բանը մեծացրել է)։

Խ

Խաթռան-խոփխան ալ
Մոսկոֆ գեշթա-կուկա։

Խաթալա արավ։
(Փախավ, հեռացավ գործից)։

Խալմուխ եզը սամառ եզին չիվթ չէ։

Խաղ ու դաղ, դաք ու բաղ,
Չիմացա՝ ո՞րն է դաք, ո՞րն է բաղ։

Խամ հաքիր՝
Խաս վայելցուր։

Խամաղ մարդը դեղը կանր
Օնքի ձարով ալ գըմաղնե։

Խաշին ղորութիյունը հավադը զուղա։

Խաշը մերն է, զորութինը կիդինք։

Խաբա թողը չի բառգիլ։

Խառղան խառղայի աչք չի հանիլ։

Խառղան իր բոշին վրան
Խարախաքեր գրպերե։

Խառղանները սև հաքնելու չին։
(Ասում ենք, երբ մի անպետք մարդ
մեռնում է և կամ երբ կատարվում է
չնչին կորուստ)։

Խաս պանը ինքը իրեն գըցուցունե։

Խարա խուշը խարա խաբեր գպերե։

Խարիրը թեմպել ըլանը,
Հիվանդ իմ,—գասե։

Խավիծին խաթռին թավային
դագը գըլզե։

Խաֆան առավ (հասկացավ)։

Խաֆան բարաբ էղաձեն,
Ոտքերն ալ հանգիստ չունին։

Խաֆան ուռիլ է։
(Չի ուզում գործը շարունակել,
բեզարել է)։
Խելք գա՝ մեյդան,
Խելք գա՝ զնդան։

Խելք գա՝ մեյդան,
Խելք գա՝ զնդան,
Խելք գա ձովին օշթան։

Խելքը գարիքին մեշը չէ,
Խելքը կլխուն մեչն է։

Խելքիդ նստիմ, թայղան էշթամ։
(Ասում են, երբ անում են անմիտ
առաջարկ)։
Խելքի բառկելու պան չէ։
(Անիմաստ բան է)։

Խըլիք, խըլիք դիդիգ արա,
Վերջի պանը մդիգ արա։

Խըբլիքը խելք ունենանը, գրագին
վրան գերվի՞։

Խըդիկը կդիլ է։ (Թույլ տեղը գտել է)։

Խըշըթխան գերած շուն է։
(Շատ կատաղած է)։

Խըսմեթը պարի չէ,
Ինչ գձախվի, ինչ գըկնվի։

Խըսմեթը պարի չէ,
Չի ձախվի, որ կնիս։

Խըսմեթը ըլանը, հինդեն գուկա
Չըլանը՝ ձեռքեդ ալ գեշթա։

Խըսըռ պարին չինքահին,
  (Անպետք բանը չեն պահի)։

Խիղճդ մաքուր ըլանը,
Քունդ ալ անուշ դըլլա։

Խիստ աղու մի լա,
Որ թուքնում վրադ,
Անքան անուշ ալ մի լա,
Որ լզին վրադ։

Խմանը կինի խմողը չէ,
Խմանը խելքը խմողն է։

Խմորը մենք շաղեցինք,
Թաթան տուք դուդիք։

Խմորը թեքնեն թթվիլ է,
Նա նոր փուռ վառելու էլլիլ է։

Խնդումը-դրդումը մեղդեղ ին։

Խնձորի ձառին դագը
Տանձ չիս կդնիլ։

Խողը իր խոզութինը չի մոռնալ։

Խոզը խոզ ալ գըմնա։

Խոզին կլուխը ֆառախիլ ին,
Ճանիլ ին թարաքը տրիլ ին,
Նա գենե վար, չամուռը, ինդիլ է։

Խոզն ալ իրեն դադը չի աջռիլ։

Խոշդ պարեդամիդ խաթըռը կիդցիր,
Ոտքերը լվա, ՛Ճուրը խմե։

Խոռոզը չոփին մեչեն հիլում կդիլ է։

Խոռողի ծան չըլսած պան է։

Խոռողին ծանը իրեն չոփլուգին վրան
ամուր դըլլա։

Խոռոված խոռ գուտէ,
Սև սալդաթին ոտքը զուդե։

Խոռվային ֆունդը շադ կըլլա։

Խոսք չէ, բուտարի գամ է։

Խոսք չէ, օցի գըջ է։
  (Երբ խիստ վիրավորում են)։

Խոսքը մեծին,
Ճուրը՝ փոքրին։

Խոսքը քանի պերանդ է, քուգուդն է,
Պերանեդ էլավ՝ քուգուդը չէ։

Խրադ դվող շադ գըլլա։

Խուլը ույմիշ գանե։

Խումը մարդուս այբը մեյդան գըհանե։

Խունգը դիրոջը գըկդնե։
Խևը իր օրը արիլ է,
Խելոքը նստիլ է, նայիլ է։
Օրս կուկա դեհին։

Խևին կլոխը շուդ չի ջերմգի։

Խևին պանի տիր, նա քեզի դահա մեծ
պանի գըդնե։

Խևին հացը՝ խելոքին փորը։

Խևին խրադը, սևին սաբոնը մեգ պան է։

Խևին յոթանասուն էրգու դեսագը գըլլա։

## Ծ

Ծանը Նևետիկ էլլավ։
  (Ձայնը Վենետիկ հասավ)։

Ծանը գաք դեղեն գելնե։

Ծեռք չէ,
Աղ ու խաչ է։

Ծեռքով դուր,
Աչքով մի նայի։

Ծեռքեդ եգածը եդ մի ծկիլ։

Ծեռքս չդդրած հոգիս չի ցավիլ։

Ծիին չոր կլոխին մի հավադա։

Ծին ջանչըցիր՝ քալվածքեն,
Իսկ ախչիգը՝ նայվածքեն։

Ծին խելոք հայվան է,
Պայց ուլաֆով դըխաբին։

Ծին գըտադե,
Շունը գուդե։

Ծմեռը ծմեռ գըվայլե,
Ամառը—ամառ։

Ծկե էդևդ,
Գուկա առչևդ։

Ծմերուգը խաս եմիշ է,
Մերը էղածեն խաթըռը չըդիդինք։

Ծուկը կլոխեն գըհոդի։

Ծուկի փոլ է։
  (Խիստ շատ է)։

## Կ

Կալ անցիլ է առջևեն։
(Ամեն ինչ հաղթող)։

Կալ դարան։ (Կոխած տեղը չորացնող)։

Կալեն վախնցողը օչխար չի բահիլ։

Կալը ձնրանանը,
Շուննրուն խաղալիք գրլա։

Կալի արցունք գըթափն։

Կալի բերանեն օչխար՝ չի աղադի։

Կալի շարագան մի կարգա կլխուս։

Կալի շարադան։
Կալին կլխուն ավեդարան չին կարդա։

Կալին հեդ ընկերություն անել չի ըլա։

Կեղի շունը քաղաք մդնենր
Բոշը սըխմած գըքալե։

Կեղին մեչը մեդ հատ կեշը
Օխտը մահալա իրար կրխառնե։

Կեղին ընգած ճուրը
Իրեն ճամփան դըկդնե։

Կեղինը ոթա. եղը,
Մեմալ չի լցվի դեղը։

Գետինեն ելածը կեդինը դեշթա։

Կեշ դինմաշդուն գըչած գունը,
Աստված ալ չի խոշտի։

Կեշ գովը գաթ գուդա,
Թեքմայով գդարնե, գըվոթե։

Կեշ մաշդումեն հեռու քալե,
Փեշդ փեշին մի քըսիլ։

Կեշ մաշդուն փեշդ գըշենը,
Փեշդ գդռե ու թաքլե։

Կեշ մաշդուն հեդ հաց ուդելն ալ վախ է։

Կեշ մաշդուն հեդ հաց գերաձեդ,
Իմաստունին հեդ քար գրե։

Կեշ օրը աղեգ գըլա,
Կեշ մաշդը աղեդ չի լալ։

Կեշ գինմաշդումեն ձովի մարն ալ
փախիլ է։

Կեշ, տուն գեցիր,
Աղեգը շըկդնիմնը,

Գենն քեզի կուկամ։

Կեշ գինմաշդեն տեվերն ալ փախիլ ին։

Կինին գըհնդուին համով,
Աղչիգը՝ նամով։

Կինին նես,
Սըռը դուս։

Կիր-կարթումեն խեր իմաստուն չի լալ։

Կիրդդ նստիմ,
Միրուքդ փեդիմ։

Կլխավոր ունեցող դինմաշդը
Աթոռքի վրա նստած է,
Ցունեցողը՝ քուրսիի վրա,
Տայամայի դեղ չունի։

Կլոխեն վեր դըղրուցե։

Կլոխը մազ չկա, սանդռելու էլիլ է։

Կլոխը փորեն գագող արիլ ին։

Կնա մեռիր,
Արի սիրիմ։

Կնաց հուրը,
Մնաց մուրը։

Կնացին կառները,
Մնացին կայլերը։

Կող՝ սիրդը տող։

Կողը լուսինին դուշման է։

Կողը կողեն կողացավ
Դեսնողը զարմացավ։

Կողությինով հարստանալ լարնը
Առչինը մուգը կըզենգընար։

Կոմեշը հով հայվան է,
Ամա խայմախը համով է։

Կոմես մդնող շունը,
Հավ ալ դուդէ։

Կոմեսի կող։

Կործը վերշացուցեք,
Անդից դոշագ ձկեցեք։

## Հ

Հա քարը փարշին ղարգիլ իս,
Հա փարշը քարին։

Հազար քապիկ գեր, խմե,
Մեզ քապիկ մի գորցունուլ։

Հալխեն քապիկ,
Որփին շարիք։

Հալխը մըռչում է։
(Մեծ քանակով ժողովուրդ է)։

Հալխին միսը ծամել։
(Ուրիշներին բամբասել)։

Հախըս էնը, կուկա։

Հաձե, բաբադ գաձե,
Մամադ գեփե,
Տուն ալ գուդիս։

Համ հաճող է, համ ել ձախող։

Համայիլ արա, ճուրը խըմե։

Համարաթ գինմաշդը էրգանը վրայեն դիմացվի։

Համփերե, որ համը պերե։

Համփերութինը դյանք է։

Հայելին մարդուս պարեդամն է։

Հայը հարստանանը դունին բադերը ձուռ գերևնան։

Հայը օդարին մազհաբ է,
Իրէն խասաբ։

Հային չխափողը
Անդենը սև օրես գըմնա։

Հավը աձել գուգե,
Բունգալը չի կդնիլ։

Հավը խազին նայիլ է,
Փորը բադոփլ է։

Հավը գաձե,
Ուրուրը դըդանե։

Հավը գաձե,
Ջիջուն գուդե։

Հավը գուդե հադիգ-հադիգ,
Ջով ծմեռեն դելնե զադիգ։

Հավին էրազը գորեգ էգիլ է։

Հավի գաթը բազաս չէ դունեն։

Հավին տիմացը գորեգ գըցանե։

Հավգիթի կողը հավ ալ գըկողնա։

Հավգիթը ոռը էգիլ է,
Պունգալը գըփնդռե։

Հավգիթին մեջը մազ գը փնդռե։
(Սուտ պատճառ է որոնում)։

Հավգիթ ուդող շունը
Ձիփչա ալ գուդե։

Հավգիթին մեջեն էլլածի բես թեմիզ է։

Հարամ վաստակը բորանը դդանե։

Հարամը էդավ,
Հելալն ալ գարավ։

Հարամը գըմդնե,
Հելալը դելնե։

Հարփածը իրեն խելքը ռախիին մեջը գըմոռնա։

Հարսաթ նստիլ է էրեսիդ։
(Երեսիդ կարոտ չէ)։

Հարսդ մեռնենը
Դեղը հարս կուկա,
Դղագ մեռնենը,
Դեղը դղա չի կա։

Հարուստը էգեր խարիբնանը,
Նարա խալդինին դագը մնացած եղն ալ դասը օրվան գօկտե։

Հարուստը խարիբցիլ է՝
Քառսուն դարի վրայեն
Հարուստի ֆոդ էգիլ է.
Խարիբը հարստացիլ է՝
Խարիբի ֆոդը մնացիլ է։

Հարուստը մեռնե նը՝ աշխարհ դըթնդա,
Խարիբը մեռնե նը՝ մաշդ ալ չիմանա։

Հարուստը ասիլ է՝ մուգը էրգաթ գուդե,
Հավադացիլ ին։
Աղքատը ասիլ է՝ շունը մածուն գուդե։
Հավադացած չին։

Հարուր շունին վրան մեգ քար։

Հացը ձունգին վրան է։

Հաց ու պանիր
Գեր ու քնիր։

Հաց ու պանիր
Գեր ու բանիր։

Հաց ունեցիր ջեմը,
Ուդողներ միշտ դըլան։

Հացին մոդիկ,
Պանեն հեռու։

Հավը հով էղածը ղարար չէ,
Ճեմը հավգիթը բոլ թո ածե։

Հելալ վաստագով էգած ստագը,
Հեմը ուժով է, հեմը համով։

Հեծիր դևեն, քանի չոքած է,
Ջենե վերչը ուշ գըլա։

Հեմը դեր,
Հեմր ուդեցուր։

Հեմը խոդը սաղ,
Հեմը գովը կեր։
(Անկարելի բան)։

Հեմ դասիմ, հեմ դանիմ։

Հենդեքին մեչը օսկի կդիլ է։
«Ասում են՝ երբ մարդ հանկարծ
(հարստանում է)։

Հեռու սաղանայի աչքեն։
(Ջար մարդիկ թող չլսեն)։

Հեդ դաթի մդիլ է,
Հեդը հոդվո գելնե։
(Մոր տված սովորությունը մինչև
մահ կմնա)։

Հերվան խելքիս աս դարի չիմ հավնի։

Հերվան խելքը աս ղարվան յարամիշ
չի լալ։

Հրոշման էդավ։

Հիմար կլխին բաղչառով
Ոտքերը գըդանչվին։

Հին պանը նորեն ամուր դըլա։

Հինգ քապիկի համար
Վեց քապիկի մոմ դվառե։

Հինդստանեն կուկա ծանր։

Հինգստան օնկուղ դոդրին նը,
Նա մեչեն դելնե։

Հիվանդին անգաչը չորս գըլա։

Հիվանդ շունը ինքը գը կդնե
Իրեն ցավին չար արոդը։

Հոգիդ մարմնիդ ձառա արիլ իս։
(Խղճի հակառակ բան անել)։

Հոգիդ ծախե, դուն կնե,
Առանց հոգի մեչը նիստ։

Հոգուս մալիմ եղա։
(Ես նախօրոք զգացի)։

Հող պռնիս, օսկի տառնա։

Հոշիս էգավ։ (Զարմացա)։

Հոռոմը գըսիրե իփլիգ հալվա,
Անումը արիլ է թել-թել հալվա։

Հոռոմի չոլին բես անձար է։
(Մարիամպոլի հույները, որոնք հայե-
րի հետ միասին հանված էին Ղրի-
մից, ստացել էին շատ մեծ հողա-
մաս, շուրշ ութը հարյուր հազար դե-
սետին, իսկ հայերը ստացան միայն
90 հազար դեսետին... ութը հարյուր
հազար դեսետին թագուհին կտրեց,
տվեց Հոռոմին՝...
Ազովի ծովից մինչև Վալնավախ, Հոռո-
մը ուրախ կըքալե անվախ։
Սակայն հույները չը կարողացան յու-
րացնել այդ մեծաքանակ հողը։ Նը-
րանով շատ օգտվեցին նախիչևանցի
անասնապահները։ Հույների հողի չա-
փից ավելի շատ եղածը աչքի առաջ
ունենալով, ամեն չափազանց շատ
բանին նախիչևանցիք ասում են՝ Հո-
ռոմի չոլի բես պան է)։

Հորե էքսիգը՝ էքսիգ չէ,
Մորե էքսիգը՝ էքսիգ է։

Հորը ստագով փսագվողը
Գնգանը խաթրը չի իմանալ։

Հուրեն էլավ, մուրը մդավ։

Ձ

Ձակ հիլումը դունը չի մնա։

Ձակ օսկոռով լվանալ։
(Ագահությանը վերջ դնել)։

Ձանդռ քարը դեղեն հանելը տիժար
պան է։

Խելոք մարդուն սխալը պռնելը
ավելի տիժար է։

Ձառը ժամանագին բիտ գնդիս։

Ձառը գդռիլ ին,
Իրենք ալ սալխըն գըփնդռին։

Ջարը ձարին հասավ։

Ջարը փուսկով գա։
(Ծայրը պոչ ունի, բարդ գործ է)։

Ջերանաս—ձերին բաղիվը դիմանաս։

Ջերացավ՝ ձըռացավ։

Ջերը և դղան մեգ պան ին։

Ջիձեռնակը աղեգ թռչում է,
Ճեմը ցուրդը էգածովը գըփախչե։

Ջովը ընգնողը թաթավեն չի վախենա։

Ջովը ընգնողը օձին գըփաթթվի։

Ջովի խում է։ (Խիստ շատ է)։

Ջրարիդ մեչ գա՞ ադբես պան։

Ջուռ աչքով նայել։
(Ջհավանել)։

Ջուռ փադը գռնագը,
Էրգու խալդին ճուր գանող
Դեսոք ախչգա ճուրը
Շատ գըլա խմող։

Ջուռլի-մուռլի գովը շադ գաթ գուդա։

Ճ

Ճուր ու հաց,
Սիրդը պաց՝

Ճուրը կնացած ջամփան չի փոխիլ։

Ճուրը կնաց,
Ջարավ եդ էգավ։

Ճուրը ընկնելներեն վերչը
Բալախները չին լոզի։

Ճուրը տուրսըդ գըթեմզցունե,
Արդասունքը՝ ներսըդ։

Ճուրը ծկիսնը, էրեսը դելնե։

Ճուրը չհասած՝ բալախդ մի լոզիլ։

Ճուրի բես պերանք կիդե։

Ճուրի փարչը ճուրի շամփան գըգոդրի։

Մ

Մագի փաթթոց արիլ է։

Մադս մեչն է։

Մադազ պերողը աղն ալ հեդը գըպերե։

Մադգ պերանը մի տնիլ։
(Ջխաբվես)։

Մազ գուզիս, մազանդարա կնա։

Մազի թելի չափ մեխք չունի։

Մաձուն է, թան չէ,
Ամեն մարդու պան չէ։

Մահեն վախեցողին արրաձն ալ
Մահի սրայի պան է։

Մահը կալու լանը,
Ծան չըդված կուկսո։

Մահը ահ գուգա,
Ահն ալ մահ գուդա։

Մազը առիլ է,
Ճուր պերելու կնացիլ է։

Մայիսը դարի գըրահե։

Մայիսի փադցած։
(Մըսկոտ մարդ)։

Մանչ—գաբագ գանանչ։

Մանչ պերող ախչգանը
Տիրացինը չի առնիլ։

Մաշդ ասած պանդ քարեն, փադեն
ամուր է։

Մաշդ գա, մաշդ է,
Մաշդ գա փուշդ է։

Մաշդ հավադը՝ գըփոխե
Փնութինը չի փոխե։

Մաշդ գա՝ մերուգ է,
Մաշդ գա՝ փթած ծմերուկ է։

Մաշդ գա, մաշդու քահանա,
Մաշդ ալ գա մաշդու սադանա։

Մաշդ սև հաց ուտե,
Շեն սրդով ուդե։

Մաշդս մաշգով է։

Մաշդուս աչքը հողը գըգշտացնե

Մաշդուս իրեն արաձը։
Դուշմանը չի անիլ։
Մաշդ մաշդու՝ պարի,
Հավը հավին՝ կարի։

Մաշդուս փնութինը իմանալու համար
Նարա հետ ջամփա ըիդ էշթաս։

Մաշդուս փնութքը իմանալու համար
Մեգ փութ աղ մեգդեղ բեդք է ուդել։

Մուշուցք ղավազը մարմինի ողդ է։

Մաշդ գա, էշ է,
Մաշգ ալ գա, գեշ է։

Մաշդ գա՝ մարդասեր,
Մաշդ ալ գա—մարդագեր։

Մաշդուս կործով դիմանան։

Մաշդու հեդ կործ ունենասնը,
Միրուքը միշտ ծեռքդ բահե։

Մարքարիդի բես շարից խոսքերը։
(Ճարտար խոսեց)։

Մաշդուս խելքը բեշիգին մեշեն բելնի
գըլա։
(Խելոքութիւնը փոքր հասակից
հայտնի կլինի)։
Մաշդ գա, որ գուդե աբրելու համար,
Մաշդ ալ գա, որ դաբրե ուդելու համար։

Մարը սոխ, հարը սխտոր,
Տացամեն էղածը ի՞նչ րիդ լա։

Մարը հաց,
Դդան լաց՝

Մարը մեռավ, հարը եկնա գըտառնա։

Մար գա՝ ղավադ չկա,
Ջավադ ղա՝ մար չկա։

Մարգի հավա է։
(Մթերես մարդ)։

Մարգի արևը՝ հարսիս,
Խաշի արևը՝ ախչդանս։

Մեծ զրուցողին մեծ լոխման պերանը
գըմնա։

Մեծ գեմիին մեծ քամի է բեդք։

Մեծ ծուկը բըղդիգին գուլ գուդա։

Մեգ հադ մաշդ չի ասի՝
Իմ մածունս թթու է։

Մեզ ծեռքով էրգու ծմերուգ չի պռնիս։

Մեգ հադ փոքր մուգը
Բալաբան ֆիշի գըմանդռե։

Մեգ հագ մաշդ չի ասի՝
Իմ ալուրս ջերմակ չէ։

Մեդ հագ չիշագով ամառ չի կա։

Մեգը հարս գըլա,
Մեդալը փեսա,

Խեը մեշը գըխնդա։

Մեգ պանը ինչքան խառնիս,

Անքան ֆոգը գելնե։

Մեգ խեը քարը ձուրը ծկից,
Դասը խելոք չգըցան հանել։

Մեգ շաբիքը էրգու հագ արած չէ։

Մեդ փոր հացի էղանք,
Մեգ փուռ հացեն զըգվեցանք։

Մեգ գոլի ծուդ ինք։

Մեգ մադի վրա գըխաղցունե։
(Իր ուզածը կարող է անել)։

Մեգ ծեռքով շափ չիս զարնի։

Մեգ օշխարեն էրգու մոշթի գըքեշթին։

Մեգ օր մը մեր մահալան ալ հարսնիք
գըլա։

Մեգ օր մը մեր կեզն ալ ուխտ գըլա։

Մեգ գախտագը բագաս է։
(Խելքից քիչ պակաս է)։

Մեղա, մեղա, ես ալ հարս էղա։

Մեղուն միողի էդևեն Բաղդադ կուկա։

Մեխք արա,
Բարդք մի անի։

Մեխքը ստագին վիզը ըլա։

Մեխքնաս, ինքդ մեխքնալու գըլաս։

Մեմալ հարս ըլամնը,
Գուգուզ գընստիմ։

Մեմը էփողը կիդե,
Մեմալ պերողը կիդե։

Մեմը գռնագը շդգվեցավ։

Մեմը ջին էղար,
Ան ալ մաշդ մեռուցիր։

Մեմը Նալին,
Մեմը՝ կամին։

Մեմը նոր դունին, մեմ ալ նոր հարսին՝
Ամեն օր մեգ-մեգ պան գըբագասին։

Մեմը դոշադեն գանոխ էլլողը՝
Մեմալ գանոխ կարքվողը խափված չէ։

Մեմը ուղողեն վախեցիր,
Մեմալ չուղողենւ
(Վախեցիր և շռայլողից և ժլատից)։

Մենք ալ կողուժինի էլլանք,
Լուսնինգան ալ ձաքեցավ։

Մեռելը կերեղմանեն չի էլնի։

Մեռելի աչքեն արդսունք չի էլնի։

Մեռղը չունիսնը,
Մեռղամանը ունեցիր։

Մեռղը պերանը սաղանա։

Մըռմըռասը փեդելով,
Ջաղիկը շուդ չի պերիս։

Միհանաչին գըկովե ըողաչիին,
Ըողաչին (գըկովե) միհանաչիին։

Մինչև աղըն էգավ,
Մաղաղը վերչացավ։

Մինչև հորսուգ չըխնդացողը
Հարսուղի էդև ի՞նչքան ըիդ խնդաւ

Մեձցավ՝ մեձ ցավ։

Մեձային առչևը թոռը միշտ նաղ
գըձախեւ

Մեձ լոխման պերանը մնաց։

Մեձ լոխման գուլ դվից։
(Ասում են՝ երբ մեծ զրուցող մարդը իր
ասածը չի կարողանում կատարել)։

Մեձցած փոքրցած։

Մեռնելեն մի վախենա,
Ահեղ տաղաստանեն վախեցիր։

Մեռնողի մասին ասա ճեմը աղեգը,
Փեռաղի մասին՝ ըաըանձվե։

Մեռնողին պարին հեղը գըմեռնի։

Մեռնողին էդևեն աղեթ չէ մեռնել։

Մեռոնի չիչագ է։
(Անթառամ ծաղիկ է, մաքուր, աղնիվ,
մարդ)։
Մեչ խաղաց։

Մեր տուռը գորեգ գուղին,
Ուրիշին տուռը հավգիթ դաձին։

Մեր չըրախը գըվառինք,
Հալխին գալաչին կանինք։

Մինչև հունիս,
Ունիսնը՝ ունիս,
Ջունիսնը՝ չունիս։

Մինչև որ ախչիգը դունեն տուրս գելնե,
Տուռին էդևի ավելն ալ տող գելնե։

Մինչև հարուստին քեֆը լանը,
Աղքաղին հոքին կելնե։

Մինչև խելոքը փսագվելու էլավնը
Խևին դղան ըաղարեն միս պերից։

Մինչև Շուշանը հաքնվեցավնը,
Ժամեն էլլան։

Մինչև դղան լաց չըլանը,
Մարը նարա ձիձ չի գալ։

Մի ունեցիր հարուր դահեգան,
Ունեցիր հարուր պարեգամ։

Միշտ մեգ անուշ լոխմա
Դունիդ մեչը ըիդ լաւ

Միս ծամել։

Միսը քեղի, օսկոռը ինձի։
(Այսպես ասում էին առաջ, երբ ծնող-
ները իրենց զավակներին տալիս էին
աշակերտության)։

Միսը առանց օսկոռի չի լաւ

Միսը օսկոռեն չի պաժնվի։

Միրաս գուդիս՝
Գըմուրաս։

Միրուքը մեձնալով, խելքը չի մեձնա։

Մոր անեձքը օրհնանք է։
Հոր անեձքը անեձք է։

Մորը գաթին չափ համով է։

Մորը մեգ օրհնեքը օխտը վարթաբեդի
անեձք գըքագե։

Մորը նայե՝ ախչգանը առ,
Ջարը նայե՝ քրթանը առ։

Մորը մանաձը ձախող է։
(Մորը հաշվին ապրող է)։

Մորս գաթին բես հելալ է։

Մութ աշխարքեն լուս աշխարք էլլավ։

*Մութ ու լույս, մութ ու լույս,*
*Մեմալ Նայիս՝ տուռեն տուս։*

*Մութ խուլյուն խոթիլ է։*
*(Շատ խորը պահել է)։*

*Մութ աչքը լուս էգավ։*

*Մութին տիմացը լույս դա,*
*Լույսին տիմացը մութ կա։*

*Մութին վերշը միշտ լույս գըլա։*

*Մուղը ձակը մեղնած չէ,*
*Ցախ ավելը դապիլ է բոշեն։*

*Մուղը վար ինգնինը,*
*Կլոխր դըրբադոե։*

*Մուգին շեռն ալ ձովին ֆայդա է։*

*Մուգին ձակը բահած պան շադ։*
*(Թաքցրած բարի շատ)։*

*Մունչ օյին խաղալ (դիտմամբ լռել)։*

Յ

*Յա ախտ, յա բախտ։*

*Յա աղն է բագաս, յա մաղը։*

*Յիվաշ ծիին թեքման ամուր դըլա։*

Ն

*Նա իրեն քիլիմը ճուրեն դըհանե։*

*Նա նորա մինը մդավ։*

*Նա ցինգանայի ցեղեն է։*

*Նա պրուսայեն ճուր գխմե։*
*(Մեծամիտ մարդ է)։*

*Նայե աղեդ, շենե մաձունը թան*
*դառնա։*
*(Մի գործ սկսելիս, այն լավ ուսում-*
*նասիրիր, որպեսզի վերջը չվնասվես)։*

*Նարա առշեեն կալ անցիլ է։*

*Նարա գերածը ես շոխտան փըսխիլ իմ։*
*(Ինձ վաղուց հայտնի է)։*

*Նարա խելքը կլոխեն մեգ խառըշ վեր*
*գքալե։*
*(Խելքը չհասած գործի է մտնում)։*

*Նարա կիդցածը ես մոռցիլ իմ։*

*Նարա խելքի պալիքն է։*
*(Նա նրա խելքի բանալին է)։*

*Նարա ծեռքը, ոտըք լվա,*
*Լվացած ճուրն ալ խմե։*
*(Շնորհակալ եղիր քեզ լավություն*
*անողին)։*

*Նարա ունունը էլիլ է երգու արուր,*
*Դանը շունի՝ թանաբուր։*

*Նարա լացը քիթին դակն է։*

*Նարա փեշին վրան աղոթք անել չի լալ։*
*(Հավադարիմ մարդ չէ)։*

*Նարա լեզվին վրան ծակ չի նստի։*

*Նարա հացը ձունդին վրան է,*
*Էլլե, գայնենը՝ վար գինի։*

*Նարամեն հավգիթ առնողը*
*Մեչը տեղնուցք չի կդնիլ։*

*Նացա արալըխներեն ճուր չի անցնիլ։*
*(Շատ մոտ բարեկամներ են)։*

*Նաքա մեդ ձագե գնային աշխարքիս*
*վրան։*
*(Մեկ գաղափարի մարդիկ են)։*

*Նաքա մեգ դուդուկե դըփշին։*
*(Նրանք համամիտ են)։*

*Նեղի մնասնը,*
*Օցին ալ գըփաթթվիս։*

*Նեսի սըռը տուս չի հանիլ։*

*Նեսեն սև,*
*Տուսեն ջերմագ։*

*Նեսերս գրագ,*
*Տուսերս ջերմակ։*

*Նմանը կըսիրե նմանին,*
*Սադանան ալ՝ իրեն խնամին։*

*Նշանով մաշդումեն վախեցիր։*

Շ

*Շադ աբրելը պան չէ,*
*Շաղ դեսնելն է պանը։*

*Շադ աբրողը շատ պան գըդեսնե։*

*Շադ զուրուցը սուտ զուրուց կըլա։*

*Շադ խաղ կիդիմ,*
*Համա ծան շունիմ երգելու։*

Շադ խնդացողին խև ջանըլցիլ իս,
Շադ սուս դեցողին ալ խիստ խելոք
մի շանշնալ։

Շադ մի սիրիլ, ադել գա,
Շադ մի ադիլ, սիրել գա։

Շադ մոդգցողը
Շուդ ըեղմիշ գըլա։

Շադ մի մեձնալ,
Քեզիմեն մեձ աստված գա։

Շադ չուվաններ գդռաձ է։
(Շատ վատ գործեր կատարած է)։

Շադ փոսեր դեսիլ է։
(Շատ փորձանքների է ենթարկվել)։

Շադը կնաց,
Քիչը մնաց։

Շադը շագին օկտած չէ,
Քիչը քիչին օկտիլ է։

Շադին ըլանը,
Քիչեն ալ գըխալսի։

Շանդանները ժամեն հանիլ ին։

Շարմըղունը գերիլ է,
Թեփը մեզի թողուցիլ է։

Շաքարը շունին պերանն է։
(Լավ գործը վատ մարդու ձեռքն է)։

Շեն ղուն հարսնիք էգար։

Շիդակ ասողին թեփեն ձագ գըլա։

Շիդագ ասողին ծին հագիր բիդ գայնի։

Շիդագ պանը դզեն բիդ իմանաս։

Շիդագ-շիդագ,
Շիփ շիդագ։

Շուդ քալողը թեզ գըհոքնի։

Շուն, արի, խած ինձի։
(Սպառնալի դիրք է բռնում
թշնամու դեմ)։

Շուն ու գադու են։
(Խռով են իրար հետ)։

Շունն. շուն կըցկնվի։
Սամուրեն սամուր։

Շուն է, կալ է,
Մեր ախպարն է։

Շունը գադուին հեգ
Գարո՞ղ է աղեդ ապրել։

Շունը գըհաչե,
Քամին ըըդանե։

Շունը դիրոշը գըշանշնա։

Շունը իրեն ադեթը չի մոռնալ։

Շունը իրեն յարան ինքը գըլզե։

Շունը հաշելեն կալ գըպերե։

Շունը մսի ֆոտ առիլ է։

Շունը շադ, տեք օսկոռ լա։

Շունը շունի միս չի ուդի։

Շունը ծմեռը ասիլ է,
Որ ամառ կանը, շարդախ բիդ խոշտե։

Շունը շունին վրան գըհաչե։

Շունին անոնը դուր,
Փադը ծեռքդ առ։

Շունի գաթ ձըձաձ է։
(Վատ բնավորության տեր մարդ)։

Շունին պերանը օսկոռ ծկիլ է։
(Կաշառել է)։

Շունին պոնային մեշը օսկոռ չի մնալ։

Շունին, կալին դեր էղավ։

Շունն ալ ծմեռեն ամառ էլլիլ է։

Ո

Ո՞վ գըրուցիլ է ադ խելքը,
Որ նա կդներ։

Ո՞վ շաքաշը դվից,
Ով ալ քեֆը արավ։

Ոտքդ յոռղանիդ գորա էրգնցուր։

Ոտքը ռահաթ գերգնցունե։

Ոտքին դեղ արիլ է։

Ոտքին դակը ծմերուգի գճեթ դըտնե։

Ջ

Ջամուռը բառդե,
Խալիբդ հանե։

Ջամուռը մդավ,
Ջաշըռված տուս էգավ։

Ձանգով խե է։

Ձառոխը չոլի համար
Ողնաման է շատ հարմար։

Ձարը սազանային,
Պարին մարդային։

Ձարը չարեդ դունենա,
Փաստան փաստա էլ դոմնա։

Ձարին չարեդն ալ գա։

Ձափե, չափե, անգից գըդրե։

Ձելլե պարիներում դերը,
էլլե ղավադաց դերը։

Ձենդելե սպառած։
(Կախաղանից աղատված)։

Ձըթրճված՝ ծուկ չիս պռնի։

Ձըլալու մարդում ինչ գուզիս արա,
Նարամեն պան տուրս չի կա։

Ձըմեռած մեռոնվիլ է։

Ձըվաստագած ստադ շատ։

Ձըվանը արուլ ավիլ է,
Տերծանեն դախվիլ է։

Ձրփլախր յողղանին ղադը դըվայլե։

Ձոլախ մաշգը ըըմի ղարար է։
Վարրեդ ծեռքը շեմի համար է։

Ձոլի (չելի) չիշագը դիմացգում դըլա։

Ձոր մաշգը էրդան դըտիմանա։

Ձոր փաղին վրան արում գըքսե։

Ձորխախը քոռացուցիլ ին,
Իրանք ալ ճուր խմելու էգիլ ին։

Ձորս ձարը արուլ գվիլ է։

Ձորս ոտքն ալ նալիլ է։
(Սաստիկ խաբել է)։

Ձոփը մի խառնի,
Հոդը գելնե։

Ձրախը իրեն դադը լուս չի դա։

Ձուքառ գովին բալան չուքառ գըլա։

Ձուդողին պարին ուդողին հելալ։

Ձուզիմ, չուզիմ՝
Ջեբս անիմ։

Ձուզիմ անուշ խայմախ,
Գուզիմ բուրդ ու մեծ օյմախ։

Ձուլբուրը ծեռքեն ինգիլ է, կամ
դիզգինը ծեռքեն առիլին։

Ձուլբուրը ծեռքն է։

Ձուկումդուր-ճակնդեղ։

Ձուկումդուրը կովե,
Ամա շաքարը գեր։

Ձունիս փող, մդիր հող։

Ձուվաններ գդռթած մաշդ է։
(Շատ վատ գործեր կատարած մարդ)։

Ձուվանին էրգու ձարն ալ ծեռքն է։

Պ

Պադլան պերանը չի թըրճվիլ։

Պախռե լեգեն
Գելնե թեփեն։

Պապուշները տիմացը տրին։

Պամբասանք չէ, պանը ասանդ է։

Պան պանողին՝ շատ պան,
Բարաբ բառգողին՝ շուք շատ։

Պանը բուլղուր է։

Պանը թահմիլ չարած դեղեն գելնե։

Պանը գըհանե սրդի կամը։

Պանը կալի պերանեն խուզին
խասեցնելն է։

Պանը պան գըպանա,
Բախտավորին բախտը գըպանի։

Պանը պանեն անցիլ է։

Պանը պանելով,
Ջամփան քալելով։

Պանուգ ծեռքը չի մուրալ։

Պարադ չվանով վեր գըքաշե։

Պարագ մանած էրգան թել։
(Խորամանկություն)։

Պարեդամդ կլոխդ գընայե,
Դուշմանդ ոտքդ գընայե։

Պարեգամիդ հեգ քեֆ արա,
Առդուր մի անի։

Պաց պերանւ

Պաց դվածեդ աղեդ է, փագ դուր,

Պերան պերից։ (Հիշեցրեց)։

Պերան գա,
Լեզու չըկա՝

Պերան գա՝
Հաց չկա,
Հաց գա,
Պերան չկաւ

Պերանդ պացածէդ՝ աչքդ բացւ

Պերան չէ, Մաշտոց էւ

Պերան չէ, դաշար է։

Պերանդ եղոդածը գուզիս՝
Գոնագեդ քրդինք րիդ հանիս։

Պերանեդ էլլածը քամին դանե։

Պերանը քամիին պացիլ է։

Պերանը պերանին չի կալ։

Պերանեդ թափածը գուշադ մդնի։

Պերանի փերսենք է։

Պերանիդ արուրը չէ։

Պերանս մաղ փըսնեցավ։

Պերանս պաց մնացի։

Պերանս էրածին դորա,
Պարեմը արուրն ալ աբուր լա։

Պերանս քամիին բիդ դամ։

Պերող մարը մահին-կրողին գհաղթե։

Պեռը գոնագը ըլանը
Վեր էլլելն ալ տիժար է,
Վար իջնելն ալ։

Պրինձը քարոդ է։

Պունգալին վրան նստիլ է։
(Անգործ նստիլ է)՝

Պուրդը քամիին դվիլ է։

Պուքին գըքալե, իզը բելնի չի անիլ։

Պուքին դագը մնացածը՝ մեռած չէ,
Հողին դադը մնացածը մեռիլ է։

Ջ

Ջագադը բաց է.
Ամչնալու դեղ չունի։

Ջութած փարչին տիմացը՝
Սազերը շադ գըգոդոին։

Ջանջերուն գըրահպանե,
Մեղուներուն դըսպանե։

Ջանըմ-ջանըմ դղան մեչ խաղաց։

Ջեհեզով գնիգը գուդե հեմ իրեն
պերածը,
Հեմ էրգանը վաստագածը։

Ջեմերտեն՝ մեգ,
Խրգղանչեն՝ էրդուս։

Ջերմագ շունին փուշդը
Պամբակ ծախողին վնաս է։

Ջըբռող աչքին՝ մուխը բադջառ։

Ջըհուդը խարիբնանը,
Հին դեֆտերները կըքրքրե։

Ջըհուդի խմորոց է։
(Արագաշարժ)

Ջիգար պերողը մեգ օրմը միս
ալ դըպերե։

Ջիջի ֆեռիգ էղած։
(Պճնված)։

Ջինի բալա։
(Սատանայի զավակ)։

Ջուջուն աձե,
Գուգուն ուդե։

Ս

Սադանային անդաջը խուլ մնա։

Սաղանայի աղ գըգրե։
(Անարդար գործին նպաստում է)։

Սադանայի էգևի բաջախն է։
(Խիստ անիծված մարդ)։

Սադգած էջի նալ գըփնղռե։

Սալխն հավայի քալող է։
(Թեթև գործ որոնող)։

Սախըն դեսքին չընայիս,
Հացով ուդելու չիս։

Սաղ կլոխը ավեդարանին դակ տնել։

Սամսոնին Լուկան տոռգի էգավ,
Խադամին սիրդը չենցավ։
(Սամսոնին Լուկան Նոր Նախիջևանի)

Հողերի մեծ կապալառուներից մեկն էր։ Խաղամր—քաղաքի հողերի կառավարիչը։ Դրանք մոտ բարեկամներ էին)։

Սար ու ձոր՝
Դերդերի փոր։

Սարին էղևր մնացողը կուկա,
Սարին գադր մնացողը չի կա։

Սարսուռ կուկա վրաս,
Ի՞նչ րիդ ասե բաքաս։

Սևլը իրեն ջամփան ըրկդնե։

Սևլը կուկա,
Նա նոր բալախները ըըլողե։

Սեխր, ծմերուկը գեր,
Դավարին ալ դուր գեր։

Սերը կիդցողը դուդե,
Թանը՝ մոլորը։

Սերը պերողն ալ լեղուն է,
Սերը ղանողն ալ լեղուն է։

Սևրպևիլը մեղի համար արմաղա տառծավ։
(Նոր Նախիջևանում դեղձ չի աճում, Իսկ Ղրիմում դեղձը առատ է։ Արմաղա ասում են օտար տեղերից բերած ապրանքին։ Նոր Նախիջևանում Ղրիմից գաղթած հայերի համար դեղձը դարձել է «արմաղա»)։

Սրրմալի էգեռեն ծին չի լալ վաղուդ,
Փեթեննեն ախչիգը չի տառնա նաղուդ։

Սիմ... սիմ... Սիմավոն։

Սիրդդ գուդե ղաթով չայ։
(Այսպես ասում են, երբ մեկը ցանկություն է հայտնում ունենալ խիստ լավ բան)։

Սիրդով դվածը, ծեռքով դվածեն վեր է։

Սիրգը առիլ է։
(Այլևս չի ուղում)։

Սիրդևս ֆիթիլ անցուցիլ է։
(Շատ վատ բան է արել ինձ)։

Սիրգիդ սիրածը դեսոք դըլաւ

Սոլ սեմթեն դեղեն էլլիլ է։

Սոխին անուշը չի լալ։

Սոխին տիմացը սխտոր րիդ ցանիս։

Սովորութինը փնութք է։

Ստադր նրա մոդ ծուգի փուլ է։
(Նա շատ հարուստ է)։

Ստագ՝ ամեն պան դանե հստագ։

Ստագ ասած պանդ ծեռքի աղդ է։

Ստադը խոռվայի կլոխ չէ, որ խոլայ թուփ անիս։

Ստադը սարեր դըղըրչե։

Ստագր ստադ գըվաստադե։

Ստադ վաստգելը քիչ է,
Անոր խարջելն ալ բեդք է կիդնալ։

Ստագ վաստգողին խելքը՝ մեգ,
Թուփ անողինը՝ դասնըմեգ։

Ստագին վրան թռչուն դա,
Ամուր պռնե, չենե դըթռչե։

Սուդ ասիմ, խոշտը իմանամ։

Սուդ խև դըլա, բասը դուդե։

Սուդ խև դըլա, վանքի հավերը դուդե։

Սրդի չիչուն սադդած է։

Սև կիրը դարմիր օրեր դըպերե։

Սև դադու անցիլ է մեչերեն։

Սև գովը չերմակ գաթ գուգա։

Սև հավը չերմակ հավգիթ գածե։

Սևը նեսերես
Չերմակը առւսերես։

Սև օրը դարմիր գանե։

Սևդա էղիլ է։
(Սիրո կարոտ է քաշում)։

Սութալ ձառը ինչքան ալ ճրինը՝ բղուղ չի դա։

Սուդին ջամփան էրգան չի լալ։

Սուդին ղորռան ձագ դըլա։

Սուդխափանին գունը էրիլ է,
Հալխը հավագացած չէ։

Սուս քալողեն, վար նայողեն վախեցիր։

## Վ

Վազուդ ծիին չին ձեձիլ։

Վազուդ ծին շուդ գըհոքնե։

Վաղվան հավեն աղեդ է ասօրվա հավգիթը։

Վաղը արևը էրգու դեղե դընձայե։

Վա՜յ, ձունը թեփեխս։

Վաշդան, մուգերը վրադ կաշտան։

Վաշդին դեսքը ի՞նչ ֆայդա
Ինքը թեզ գըթոռմի։

Վաստագն ու զարարը մեգդեղ գըքալին։

Վագուժ հավին շոռվան համ չի ունենա։

Վար թուքնում՝ միրուքս է,
Վեր թուքնում՝ էրեսս է։

Վերիսա խմողը էրգու անքամ գըհարփի։

Վըդեխ հաց,
Անդեղը դաց։

Վըդեխ ընգնելուս կիղնայինը,
Դակս մինդար գըփռեի։

Վըդեխ բընգ,
Նա հոն դընգ։

Վըդեխ օչխար, հոն ալ չոբան։

Վրան շոյել չըդվող շուն։

Վրան գընայե, չի խըյմըշի։

## Տ

Տադաստան գա կալու,
Բադասխան գա դալու։

Տադելով, տագեցավ՝
Տագարդ էլլավ։

Տադեցինք, տադեցինք,
Տադարդ մնացինք։

Տայամա ունեցողը չի իյնի։

Տանագ գա՝ մաշդ գըմոշթե,
Տանաղ գա՝ հաց գըգըդռե։

Տանագը իրեն գոթը չի դաշի։

Տանագը եղին քովը դանելու դեզը
Եզը թարաքը հանիլ ին։

Տանագը օսկոռին հասնելեն եգքը
Մեգ պան օքութ չունի։

Տանագի յարան աղեգ կըլա,
Լեզուի յարան աղեդ չիլա։

Տանձ էր նը՝ հասավ,
Խնձոր էր նը՝ գարմրեցավ։

Տանձ ու խնձորը, գվայլին մեգդեղ,
Տառինշն ալ, հաթն ալ իրենց դեղը։

Տանձը ձառին դագը դիյնի։

Տանձի դամ՝ գոթը դելնե,
Խնձորի դամ՝ չոփը գելնե։

Տառամային մեչը արոդը միշտ դանանչ գըլա։

Տառինչին ձառին դագը,
Խնձոր չիս կդնի՝
Տարա-Նարա միսը ձամել։

Տոնկող մաշդ է։

Տարա կդագը Նարա կլոխը անող։

Տկալով գուդա,
Գոթով գըհանե։

Տկալով ճուր գուդա,
Գոթով աչք գըհանե։

Տուն գաշիեդ ել,
Նարա ումուրին չէ։

Տուն ինչ գուզիս ասա,
Նա գենե իրեն էշը գըքշե։

Տուռդ փագ պռնե,
Տրացինիդ կող մի պռնի։

Տուռը մեծ պանալը խոլայ է,
Բզդիգցնելը խիստ տիժար է։

Տուռին դագը տնիսնը, թոռոբադը գելնե։

Տուսի շունն ալ ծմեռեն ամառ գելնե։

Տուրսեն հալխին գերին,
Ներսեն՝ իրենց։

Տուրսեն քահանա,
Ներսեն սադանա։

Տուրսի համար աղեդ էրիգը
Ներսի համար կեշ գըլա։

Տուրսի ալ չէ,
Ներսի ալ չէ։

Ց

Ցալիս շարը կղիք։

Ցավս փորը։

Ցերեդվա փնդռածը
Գիշերը կդիլ է։

Ցինդանային թաքավոր արիլ ին,
Մաշան, գելքերին հեդը առիլ է։

Ցուրդը չամուռեն աղեդ է։

Ու

Ույան պերանը սթուն գովեն աղեգ է։

Ութր ղսյերե մութը։

Ութը օխտին շադ էղածր
Ջոխտան կիղինք։

Ուժեղ վեր կորձի մի գրչի

Ուդելու համար ըեդք է պանել,
Ունենալու համար ըեդք է կողանալ։

Ուռուֆս էլլավ։
(Խիստ բարկացա)։

Ունիսնը՝ տուն իս,
Ջունիսնը՝ շուն իս։

Ունիսնը՝ դեր իս,
Ջունիսնը աև իս։

Ուշ էգող միսաֆիրը մնացածը դուդե։

Ուսումը չի ձախվիլ, որ ղենդինը կնե։

Ուդեցնունք մեռղով գարաք,
Բելքիմ դըլա վերշը գոնագ։

Ուդողը չկիդե,
Պրշտողը կիդե։

Ուդումը խութումը մեդ բիդ լա։

Ուրաղը իր դողմը ղըդաշե։

Ուրիշի տկալով մածուն չիմ ուդի։

Ուր տեղս դըցավի,
Ան դեղն ալ հորիս է։

Ուրուրը ճիփչայի կող է։

Փ

Փախալյանը քահանա,
Սև իավյարը մահանա։

(Նոր Նախիջևանում կար Փախալյան ազգանունով քահանա, որը հավասարակշռությունից զրկված, շատ տարօրինակ մարդ էր, քահանայական պաշտոնի համար շատ անհարմար։ Ասում էին, որ նա Քիշինևի թեմական առաջնորդին տարել է շատ խավյար, որի համար արժանացել է քահանայի պաշտոնի)։

Փաշա բռունգ։
(Չաստ շրթունք, վատախոս)։

Փառչա փեթեն հաքցնելով,
Ախչիդր չի տաւնա նազուգ։

Փաղը էրգու ձար ունի։

Փեշեքերին փեշը,
Սև թաղիին լեշը։

Փեշտմալով գրագ ըըգրե։

Փեսի շուք, փուշի շուք։

Փեսիդ դեղը փեսա կուկա,
Ախչգանգ դեղը ախչիգ չի կա։

Փիլաֆ զա՝ շտահ չկա
Շտահ դա՝ փիլաֆ չկա։

Փիջն ալ իրեն դնունքը դուգե։

Փող ունեցողը առանց խելքի ալ աղա է։

Փորձանքը խաբեր չի անիլ։

Փորձվածին մի փորցիր։

Փշել գա՝ գըվառե
Փշել գա՝ գըմարե։

Փտած քոքեն սաղլամ ձառ չի վանի։

Փուխ սիրդը լեզուեն ուժով է։

Փունջը մունչին բիլբիլ գանե։

Փուշդին սեմթեն շոյեցինք։

Փուշդ մաշդ է։
(Կնամոլ է)։

Փուշոտ յափաղի է՝
(Քաղցրախոս, բայց կոշտ մարդ)։

Ք

Քաղաքի շուն էզածես,
Գեշթամ, կեղի մեձ գըլամ։

Քաղցածը շատ գուդե,
Դարգըլըն շատ գըխոսե։

Քաղցածին կերեզման չկա։

Քամիի ճաղաչքը
Տընըխ հավայի չի պանի։

Քամիի ճաղաչք է։
(Առանց համոզմունքի մարդ)։
Քամիի չուվալ է։
(Բերանը չըռնող մարդ)։

Քամիին պերաձը բորանը գըդանե։

Քամին որ սեմթեն ալ փչենը,
Քամիի ճաղաչքը գը տանի։
(Ամեն բանի համարվող մարդ)։

Քամիին տեմը թուքնողը՝
Իրեն էրեսը գըթուքնե։

Քանի որ մօստին վրան իս,
Սաղանային հեգ աղեդ բիդ լաս։

Քամին՝ քամին դարիլ է։

Քաշած քարը եդ չի տառնա։

Քաշուդ ծիին պեռը գավելցունում։

Քապիկի համար մուգ գը մորթե։
(Ժլատ մարդ)։

Քառսում մազե հաց գերիլ է։

Քառսում դարի մահ եղիլ է,
Էջելն էդողը մեռիլ է։

Քառսում դարի վրայեն
Աղքաղի ֆոդ էկիլ է՝

Քար բռնենը, օսկի դըտառծնե։

Քարը սխմենը, ճուր գըհանե։

Քար-քութուք է։
(Խիստ ժլատ մարդ է)։

Քարին դակն ալ մնանը,
Գենե մեյդան գելնե։
(Ճարպիկ մարդ)։

Քացախին փարչին զոռ մի դաք։

Քեղի նեղ արա,
Ուրիշին դեղ արա։

Քաշալը ծութ կդնենը,
Իրեն կլոխը դըքսե։

Քեսեքին մեչեն օչխարին եղողը
գըմոշթին։
Քենարեն քալող է։
(Վիճելի գործերի մեջ չի մտնում)։

Քիթը գոդռիլ է։
(Համարձակությունը զսպում է)։

Քիթեն պռնիսնը, հոքին գելնե։
(Շատ վատառողջ մարդ)։

Քիթին վար չի կա։
(Ինքնասիրությունը թույլ չի տա)։

Քիթեն խըլ անցուցիլ ին։
(Սաստիկ նեղել են)։

Քիչ ստագ ունեցողին խելքը
Գարչ գըլա, հարփենր դաղ գը գանչե։

Քիչ պառնալ,
Շուդ տառնալ։

Քիչը քիչին պավագանացիլ է,
Շադը չադին պավագանացած չէ։

Քիրամիթեն եղ կըքամե։

Քոռ խուչին պունը
Աստված գըխոշթե։

Քոռ ջանավարին բախտը պանեցավ։

Քովս էնը՝ փիֆ-ֆիֆ,
Հեռու էնը՝ թիֆ-թիֆ։

Քոքլայիլ է։
(Վայր ի վերո կատարել է)։

Քու լուս դեղը արած պանդ,
Ես մութը դեղը արի։

Քու պերանիդ աբուրը չէ։

Քու հոքիդ, քու աստվածը։

Քու կիդցածդ ես չոխթան մոռցիլ իմ։
(Կարոտ չեմ քո խրատին)։

Քունը մեռելը մեգ պան է։

Քունս գդանե, պարծ գուզիմ,
Գարմիր թուշերով հարս գուզիմ։

Քուրը սասց՝ ախպար ունիմ,
Ախպարը սասց՝ քուր չունիմ։

Օ

Օքան օքայի վրա կըլա,
Դուն գունի վրա չի լա։

Օխլով գուլ դվիլ է։
(Նիփ-շիտակ կանգնել է)։

Օխտը բորդով ընկիլ է։

Օխտը դարի մեդ մարդուս չփորցած
Չիս ըլալ ասելու, որ նա աղեգ է։

Օցի լեզու է պանեցնում·
(Քաղցր խոսելով, ուզում է խաբել)։

Օցին սաղկելու ժամանագը կանը,
Գելլե, ջամփուն վրան դըբառգե։

Օցին քունին,
Կին մաշդուն լացին՝
Մի հավատա։

Օյմախ պերան։
(Փոքր բերան)։

Օնքր խոշտելու դեղը
Աչքն ալ հանեցիր։

Օչխարը հազար էղիլ է։

Օչխարին առչևի չարեգր աղեգ ըլանը,
Էդևի չարեգր համով գըլա ու գըլա։

Օսկի ալ կգնուսնը,
Համրե անբես առ։

Օսկոռ պերող շունը՝ օսկոռ ալ գըգանե։

Օսկի աբռչանը ծեռքն է։
(Արհեստ ունի)։

Օդարի ծեռքով ճեմը օց պռնե.

Օրըդ օր արա։

Օրը օր արավ։

Օրի—գաթան փորդ գըլորվի։

Օր է կեղին մեչը։
(Գյուղի ամենաքաչ տղան է)։

Օրը էլլե,
Ջարը՝ չելլե։

Օր գա դարի գըգերագրե։

Օքսուզին խրադ դվող շադ գըլա։
Հաց դվող չի լա։

Ֆ

Ֆողը գըգշտացնե մաշդուս աչքը։

Ֆողը նարա մարմինն է,
Ծուրը նարա հոքին է։